ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Հասցե՝ Հայաստան, Երևան 0002, Պուշկինի 56ա, Հեռ.՝ (+374 10) 53-02-62,
Էլ. փոստ՝ ombuds@ombuds.am, Կայք՝ www.pashtpan.am

№ 41-Ա

«25» օգոստոսի 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ստեղծել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհուրդ:
2. Հաստատել Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի կազմավորման և գործունեության կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՔՐԻՍՏԻՆՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2022 թվականի .....-ի
N ... հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին առընթեր կանանց իրավունքների հարցերով հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կազմավորման և գործունեության կարգը, նպատակը, խնդիրները, գործառույթները, խորհրդի կարգավիճակը, խորհրդի անդամների լիազորությունների կասեցման և դադարեցման հիմքերը:
2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ սույն կարգով:
3. Խորհուրդը գործում է օրինականության, արդարության, անկողմնակալության, հրապարակայնության, սոցիալական արդարության, խտրականության բոլոր դրսևորումների բացառման սկզբունքների հիման վրա:
4. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով որպես խորհրդատվական մարմին՝ սույն կարգով սահմանված գործառույթների ծավալով և Պաշտպանի սահմանած ժամկետով:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

5. Խորհուրդը ձևավորվում է կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և անկախ մասնագետներից:
6. Խորհուրդը ձևավորվում է անդամության հրավերի հիման վրա ընտրված հայտատուներից: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է Պաշտպանի որոշմամբ:
7. Խորհուրդն ի պաշտոնե ղեկավարում է Պաշտպանը: Պաշտպանի բացակայության դեպքում՝ իրեն փոխարինում է Պաշտպանի աշխատակազմի դեպարտամենտների հայեցողական պաշտոն զբաղեցնող ղեկավարներից կամ Պաշտպանի կողմից նշանակված Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանցից մեկը:
8. Խորհուրդը բաղկացած է ոչ պակաս, քան 5 և ոչ ավել քան 20 անդամից:
9. Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն Խորհրդում կարող է ունենալ միայն մեկ ներկայացուցիչ:

ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

10. Խորհրդի անդամ կարող են լինել 21 տարին լրացած անձը՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:
11. Խորհրդի անկախ մասնագետ անդամի ընդգրկման հարցը լուծելիս նախապատվությունը տրվում է կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրավաբանի, բժշկի, հոգեբանի, սոցիալական աշխատողի, սոցիոլոգի մասնագիտություն և համապատասխան աշխատանքային փորձ ունեցող անձանց:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Խորհրդի նպատակը կանանց իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելն է՝ որպես խորհրդատվական մարմին:

13. Խորհրդի խնդիրներն են՝

1) աջակցել Պաշտպանին կանանց իրավազորման, տնտեսական հզորացման, իրավահավասարության ապահովման, քաղաքական մասնակցության ակտիվացման, կանանց նկատմամբ բռնության և գենդերային բռնության կանխարգելման, դրանց արձանագրման և աջակցության տրամադրման հարցերի վեր հանման և հասցեագրման աշխատանքներում.

2) խթանել իրավապահ համակարգում և զինված ուժերում կանանց ակտիվ ներգրավմանն ու առաջընթացին.

3) Աջակցել Պաշտպանին ոլորտի զարգացման համար կառավարության կողմից հաստատված ռազմավարությունների ու ծրագրերի իրականացման մշտադիտարկում և կատարողականի գնահատում իրականացնելու հարցերում.

4) նպաստել կանանց իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված հետազոտությունների, ուսումնասիրությունների կամ վերլուծությունների իրականացմանը, համակարգային խնդիրների վերհանմանը և դրանց հիման վրա Պաշտպանին առաջարկներ ներկայացնելուն.

5) ներկայացնել ձևավորված իրավակիրառ պրակտիկայի խնդիրները, առանձին ոլորտներում կազմակերպությունների կողմից արձանագրված պրակտիկաների բացերը, անհրաժեշտության դեպքում կոնկրետ խնդիրների լուծման նպատակով իրականացնել օրենսդրության վերլուծություններ և Պաշտպանին օժանդակել վեր հանված իրավական ակտերի թերությունները վերացնելու հարցում, ի թիվս այլնի՝ առաջարկելով օրենսդրական լուծումներ.

6) իրականացնել կանանց ու աղջիկների իրավունքների մասին իրազեկման արշավներ, կրթական ու մասնագիտական վերապատրաստման ծրագրեր.

7) ուսումնասիրել և քննարկել կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ ինչպես տեղական հասարակական կազմակերպությունների, այնպես էլ միջազգային կազմակերպությունների զեկույցները կամ հաշվետվությունները, միջազգային և եվրոպական կառույցներում բարձրացված խնդիրները և ոլորտին առնչվող այլ հարցեր, կորդինացնել ջանքերը միջազգային մոնիտորինգային մարմիններին կանանց

իրավունքների իրավիճակի մասին այլընտրանքայինն զեկույցների ներկայացման հարցերում:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. Խորհրդի անդամը կարող է իրականացնել սույն կարգով նախատեսված խնդիրներից բխող գործառույթներ:
15. Խորհրդի անդամը կամ Խորհրդի նիստերին մասնակցող անձը չի կարող՝
    1) առանց Պաշտպանի համաձայնության հրապարակել Խորհրդում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկությունները.
    2) Խորհրդի նիստերի ընթացքում հայտնի դարձած տեղեկությունները տրամադրել որևէ կազմակերպության կամ անձի, դրանք օգտագործել անձնական կամ այլ նպատակներով.
    3) Խորհրդի անդամի կարգավիճակից բխող դիրքն օգտագործել Խորհրդի գործունեության շրջանակներից դուրս այլ գործողություններ իրականացնելու նպատակով.
    4) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը կամ սույն Կարգին հակասող գործողություններ:
16. Խորհրդի անդամը, օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, Պաշտպանի ներկայացմամբ, իրավունք ունի մասնակցել Պաշտպանին հասցեագրված բողոքներում բարձրացված հարցերի քննարկմանը:
17. Խորհրդի անդամն իրեն վերապահված գործառույթները կարող է իրականացնել միայն սույն Կարգով նախատեսված նպատակի և խնդիրների իրականացման համար:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Խորհրդի նիստերը հրավիրվում են առնվազն վեց ամիսը մեկ անգամ, որոնք վարում է Պաշտպանը: Նիստերը արձանագրում է քարտուղարը, ով նշանակվում է Պաշտպանի որոշմամբ Պաշտպանի աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանցից:
19. Խորհրդի նիստերը, որպես կանոն, անցկացվում են դռնփակ: Պաշտպանի որոշմամբ՝ Խորհրդի նիստերը անցկացվում են նաև դռնբաց, որոնց կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:
20. Խորհրդի անդամներից բացի, Խորհրդի նիստերին կարող են մասնակցել Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներ:
21. Խորհրդի նիստերին կարող են հրավիրվել համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ ու պաշտոնատար անձինք, Խորհրդի անդամ չհանդիսացող այլ հասարակական կազմակերպություններ և փորձագետներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հեղինակություն վայելող հանրային գործիչներ, որոշակի թիրախային խմբերի շահեր ներկայացնող կանայք և այլ շահագրգիռ անձինք:
22. Պաշտպանը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, վայրը, ժամը:
23. Խորհրդի օրակարգը ձևավորվում է Պաշտպանի և անդամների առաջարկությունների հիման վրա:
24. Խորհրդի անդամները նախապես տեղեկացվում են նիստի օրակարգի մասին:
25. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամներից կեսից ավելին:
26. Խորհրդի անդամները նիստերի ընթացքում ազատ են իրենց դիրքորոշումը գրավոր կամ բանավոր ձևով արտահայտելու հարցում:
27. Խորհրդի որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ են քվեարկել խորհրդի նիստին ներկա անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումները խորհրդատվական բնույթ ունեն:
28. Խորհրդի գործունեության կազմակերպական-տեխնիկական աջակցությունն ապահովում է Պաշտպանի աշխատակազմը:
29. Խորհրդի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրությունը, որն ստորագրում է նիստը նախագահողը և նիստի քարտուղարը:
30. Ըստ անհրաժեշտության կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր՝ Պաշտպանի կամ խորհրդի անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

31. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում կամ կասեցվում են Պաշտպանի որոշմամբ՝ 33-րդ կետով նախատեսված հիմքերի պարագայում կամ Խորհրդի անդամի դիմումի համաձայն:
32. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են վերականգնվել Պաշտպանի որոշմամբ, եթե վերացել են անդամության կասեցման հիմքերը:
33. Խորհրդի կազմում անդամի լիազորությունները կարող են դադարեցվել Պաշտպանի որոշման համաձայն հետևյալ դեպքերում.
    1) Խորհրդի նիստերին երեք անգամ հաջորդաբար անհարգելի բացակայելու դեպքում.
    2) Խորհրդի անդամին առաջադրվող պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ նոր փաստերի առկայության դեպքում.
    3) Խորհրդի անդամի լիազորություններն իրականացնելիս ՀՀ օրենսդրության կամ սույն կարգի պահանջները խախտելու դեպքում.
    4) Խորհրդի անդամի նկատմամբ դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության դեպքում,
    5) Խորհրդի անդամի երկարատև հիվանդության դեպքում, որի հետևանքով անդամի պարտականությունները կատարելը դառնում է անհնար,
    6) Խորհրդի անդամի մահվան դեպքում, եթե Խորհրդի անդամ հասարակական կազմակերպության դեպքում նոր ներկայացուցիչ չի առաջադրվում:
34. Սույն Աշխատակարգով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Պաշտպանի որոշումներով:

ԳԼՈՒԽ 9. ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

35. Խորհրդում քննարկված հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում և հրապարակվում է Պաշտպանի աշխատակազմի հասարակայնության հետ կապերի համար պատասխանատու ստորաբաժանման կողմից:

36. Խորհրդի նիստերի արձանագրությունն ուղարկվում է Խորհրդի անդամների կողմից նախանշված էլեկտրոնային փոստի հասցեներին: Խորհրդի նիստի արձանագրությունից կարող են տրամադրվել քաղվածքներ:

37. Խորհրդի նիստերի արձանագրությունների կամ արձանագրության քաղվածքների տրամադրումը խորհրդի անդամներին ապահովում է Պաշտպանի աշխատակազմը:

ԳԼՈՒԽ 10.
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

38. Սույն Կարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Պաշտպանի որոշմամբ:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2022 թվականի ..... ի
N ..... որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀԿ ներկայացուցիչ/անկախ մասնագետ	**Խորհրդի անդամ**
«Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ	Նաիրա Առաքելյան
«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ	Նվարդ Փիլիպոսյան
«Ընտանեկան բռնության աջակցման կենտրոնների կոալիցիա»	Մարո Մաթոսյան
«Երիտասարդ Տավուշ» ՀԿ	Մանուշ Մարալչյան
«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ	Տաթևիկ Աղաբեկյան
«Քաղաքական երկխոսություն» ՀԿ	Ավնիկ Մելիքյան
«Հանուն հավասար իրավունքների» կրթական կենտրոն ՀԿ	Գայանե Աբրահամյան
«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» ՀԿ	Անահիտ Սիմոնյան
Վիններթ Հայաստան «Կանանց ռեսուրս կենտրոնների ցանց»	Ռուզաննա Տոռոզյան
«ՕքսեՋեն» հիմնադրամ	Քրիստինե Հովհաննիսյան
«Կանանց իրավունքների տուն» ՀԿ	Կարինե Դավթյան

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա»	Զարուհի Հովհաննիսյան
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ	Տաթևիկ Հովհաննիսյան
«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ	Լուսինե Հակոբյան
«Գորիսի երիտասարդական կենտրոն» ՀԿ	Կարինե Մովսիսյան